

ԾՆՈՂՔ ԵՒ ԸՆՏԱՆԻՔ

Պարկեջտութիւնը և բարեբարութիւնը ընտանեկան զոյգ ժառանգութիւններ կը նկատուին: Ընտանեկան պատիւն ու Զրիստոնէական բարոյականը երկու մեծ հիմերն են հայ ամուսնութեան, որոնք ամէն գնով հարկ են պաշտպանուիլ: Ընտանեկան յարկը փոքրիկ եկեղեցի է՝ լուռ և անլուելի: Ընտանիք և հայրենիք խորհրդանշող բառերը անեզր իմաստներ կը պարունակեն: Բաբախուն ու մշտարթուն սիրտը Խրիմեան Հայրիկին, կ'ըսէ.

«Տուն և ընտանիք փոքր Թագաւորութիւն մըն է ու երբ ժողովուրդ մը կը յառաջդիմէ, իր առաջին Բայլը ընտանիքէն կ'առնէ: Ընտանիքը ժողովուրդի մը փառքի տաճարն է, ոյժն ու բազուկը, կամ ժողովուրդի մը զեղծման սկզբնաւորութեան և կորուստի ճամբայ բացողը»:

Նահապետական ընտանիքը չէ՛, ազգային ընտանիքը չէ՛, ո՛չ ալ ցեղային ընտանիքն է ծայրագոյն ընտանիքը: Հոգատար, ծառայող ու ծառայել սորվեցնող ըտանիք մը միայն կրնայ կոչուիլ *վեհագոյն* ընտանիքը: Ան հիմնուած է փոխյարաբերութեան, սիրոյ և ծառայասիրութեան վրայ: Ընտանիքը առաջին եկեղեցին է, ու անոր սիրտը՝ խորան Աստուծոյ: Ան աշխարհի ամենէն վաղեմի և բախտորոշ հաստատութիւնն է՝ ան ազգի մը *մանրանկարն* է:

Մեր Տէրը Զրիստոս մեծ ուշադրութեան և հոգածութեան առարկայ դարձուցած էր ընտանիքը Իր ուսուցման մէջ: Ան պատուիրեց որ ամուսնութիւնը պարտ է ըլլալ մնայուն, *սուրբ* և տեւողական: Զրիստոս կը յայտարարէ.

«Ընտանիքի մէջ այր և կին միացած են և զայն որ Աստուած միացուցած է մարդ թող չբաժնէ»:

Զրիստոս բուն կերպով հակառակ էր պրոնսկութեան և տոփամու հայեացքներու: Զրիստոս նոր կեանք և նոր իմաստ տուաւ ընտանիքին: Ան ծնաւ ընտանիքի մը մէջ:

"Անառակ Որդիի" առակին մէջ մենք կը տեսնենք ծնողի մը ինքնութիւնը: Ծնողի մը իսկական պատկերը՝ *սէր, ներում և ողորմութիւն* է: Պատանիները զԱստուած կը տեսնեն իրենց ծնողաց *կեանքին* և ապրումին ընդմէջէն: Ուստի որքա՛ն ուշադիր ըլլալու ենք մեր դիտած վիտիոներուն...: Զաւակ ունեցող ծնող մը պարտ է ընդունիլ, որ այնուհետեւ իր կեանքը կը պատկանի զաւակներուն:

Ի՞նչպէս կը բնորոշուի մայր մը:

Հայ մայրը, պատմութեան մէջ բնորոշուած է որպէս աղօթքներով *հիւսուած հոգի* մը: Աղօթող մայր մը եթէ իր ողջութեանը չտեսնէ իր զաւակներուն ջերմեռանդ հաւատքը, իր մահէն յետոյ անոնք կը դառնան առարկայակա՛ն պատկերը իրենց մօր աղօթքին: Այս աստուածահրաշ դէպք իրողութիւնը յաճախ կը պատահի:

**«Երբ վերջապէս շիրմիդ վրայ լամ անգուսպ,
Պիտի զգաս այն ատեն
Որ վեհագոյն սէրը մարդուն կը ծնի
Տառապելէ վերջ միայն»**

Քրիստոնեայ հաւատքի ամենանուիրական և սրբազան հաւաքավայրը կը կոչենք Եկեղեցի: Այդ տաճարին կուտանք յաւելեալ մակդիր մը եւս ու կ'ըսենք. *«Մա՛յր Եկեղեցի»*՝ *«Մա՛յր անուշակ, Մով անթմութեան, Մոց հարազատ, Երդի՛ք սիրոյ, Զօրանոց հայրութեան»*: Մայր տաճարի սրբազան կամարներու տակ պարտ է որ մոռցուին *անձ նայան հաջիւ ներքը* ու "եմ"ը: Ընտանիքի անդամները իրարու հետ կապուած են կենցաղի ընդհանրութեամբ, փոխադարձ օգնութեամբ և բարոյական պատասխանատուութեամբ:

Ներկայ դժբախտ իրականութիւնը ա՛յն է, որ Արեւմուտքի մէջ մայրութիւնը կ'ապրի իր *մայրամուտքը*, չեմ համարձակիր ըսել մահաբունը...: Ծնողներ մոռցած են իրենց գոհարարժէք զաւակները: Զաւակներ ծննդագործելը ո՛չ առաքինութիւն է ու ո՛չ ալ հերոսութիւն, որովհետեւ կենդանական աշխարհն ալ կը բազմանայ: Առաքինութիւնն ու հերոսութիւնը զանոնք *դաստիարակելո՛ւ* մէջն է: Անոնց հաւա՛տք և Աստուծոյ սէ՛րը սորվեցնելո՛ւ մէջն է:

Ալ կը բաւէ՛ որ յոխորտանք՝ թէ առաջին Քրիստոնեայ ազգն ենք և մկրտուած 301 թուին: Ի՞նչ ըրած ենք մեր անդրանիկ մկրտութեամբ: Պատկանելիութիւնը իր մէջ կը կրէ նաեւ պարտաւորութիւններ: Ընտանիքի մը զաւակներ կը կարօտին կրօնական աւելի հիմնաւոր, աւելի առողջ և զգաստ պարտաւորութեան: Քրիստոնէական դաստիարակութեան աշխուժացումը ոչ միայն պարտականութիւն է, այլ ***պարտաւորութիւն***: Ծնողքի և զաւակներու պարտաւորութիւնը՝ միացում, միաւորում և միասնականութիւն պարտ է ըլլալ: Այսօր բաւարար չէ, որ դուն բեզ Քրիստոնեայ կոչես, պէտք է ***գիտնա՛ս*** թէ ինչո՞ւ քրիստոնեայ ես և ի՞նչ է պարտաւորութիւններդ:

Տան մայրը երբ լրիւ ժամանակով կը հրաժարի իր բնատուր մայրական առաքինութենէն և կը նետուի ջուկայի ասպարէզ, հոգեկան տարր մը կը պակսի այդ ընտանիքէն (խօսքս բացառիկ պարագաներու համար չէ): Մայրական սէրը, ջուկայի ասպարէզին մէջ, ոչ միայն յաղթուած, այլ նաեւ ոտնակոխուած է *սեռային* կիրքին և հեշտանքին առջեւ: Մայրական

շուշանագեղ սէրը, այսօր, տեղի տուած է սերային բնագոյին առջեւ, գերագոյն զգացումը պարտուած է գերագոյն կիրքի կողմէն:

Որքան ալ արդի մայրը ուսեալ տիտղոսակիր ու արհեստավարժ է, պարտ է նաեւ ժամանակ տրամադրել իր զաւակներու զարգացումին և *կրօնակա՛ն* դաստիարակութեան: Աւանդապահ ծնողքի գլխաւոր մտահոգութիւնը իր ընտանիքն էր, իսկ արդի "ազատագրուած" կնոջ և եկամուտի ճնշումը չունեցող հօր մը մտահոգութեան առանցքը, առաւելաբար իրենց անձին, պերճանքին, ակումբին կամ թղթախաղի կանաչ սեղանին շուրջ կը դառնայ: Զիտքենք մենք զմեզ և դիտենք մեր շուրջը *բաց աչքով*:

Անցեալին, հայ հայրերը մեռած էին հաւատքի պաշտպանութեան ճանապարհին, իսկ հայ մայրեր կը դաստիարակէին նոր Մերունդը: 20րդ դարուն ընտանեկան թագաւորութիւնը վերածուեցաւ հանրապետութեան, ուր անիշխանութիւնը նկատուեցաւ "ազատութիւն", անկարգութիւնը՝ "առաքի-նութիւն", սերը՝ սեռ, տունը՝ ճաշարան կամ պանդոկ, հայրը՝ դրամարկղ և մայրը՝ սպասուհի: Ամերիկեան Բաղբենի և նիւթապաշտ ոլորապտոյտը (երա-գը) *որբացուցած* է զաւակները: Զաւակներ խօսքով չեն դաստիարակուիր, այլ՝ օրինակներով: Մեր զաւակներն ու պատանիները մեր կեանքին նպատակն են, ոգին ու լոյսը: Մեր զաւակները պիտի փոխարկուին ի՞նչ որ մենք ենք՝ մեր էութեան և իսկութեան: Արդի "Եէնի Զերիները", անասուած մարդապաշտութեան դաստիարակած նոր Մերունդը, որ մեր զաւակներն են: Կիրակնօրեայ վարժարանները հոգեւոր սնուցարաններն են մեր ազգին զաւակներուն: Թորոնթոյի Բասն հազար Հայ գաղութէն Բանի՞ տասնեակ կամ Բանի՞ հարիւր պատանեակներ Կիրակնօրեայ Վարժարան կը յաճախեն Արեւմտեան ազատ երկրին մէջ...: Ո՞ւր է Հայ ծնողքին մտահոգութիւնը: Ի՞նչ նպատակի համար զաւակներ ծննդաբերեցին:

Զաւակ մը ծնողքէն կը սորվի, թէ ո՞վ է Աստուած, ո՞վ է Զրիստոս, ի՞նչ է սէրը, ի՞նչ է աղօթքը, ի՞նչ է սուտը և ի՞նչ է ճշմարտախօսութիւնը և ինչպէ՞ս պէտք է ապրիլ կեանքը: Ինչպէս ճարտարապետ մը ծուռումուռ Բանակով չի կրնար օրինաւոր և ուղիղ արդիւնք արտադրել, նոյնպէս նաեւ ծնողք մը որ, սխալներու կը հանդուրժէ, անարդարութիւն կը թոյլատրէ ու փառամոլ է չի կրնար դարբնել, օգտակար և պիտանի նոր Մերունդ մը: Դաստիարակել չի՞ նշանակեր սորվեցնել օտար լեզու, գրել կարդալ, հաջուել, դրամ ջահիլ և համալսարան աւարտել, այլ՝ կեանքը դիմագրաւելու, կեանքի դժուարութիւնները յաղթահարելու գրահներով զգեստաւորել է: Երգիծան-քին նպատակը մարդիկը խնդացնել չէ, այլ զանոնք դաստիարակել և սրբագրութեան հրաւիրել է: Մարդը դաստիարակելու, զայն դէպի բարին ու կատարեալը մղելու խնդիրը ցցուն ու յայտնի է Զրիստոսի ուսուցումներուն մէջ:

***«Դաստիարակելու կոչուած է՛ք սերունդ մը,
որ ապագայ ազգն է»--Կոմիտաս:***

Դաստիարակութեան առաջին բարիքը սրտի՛ կրթութիւնն է անկասկած:
Ծնողքի մը կենցաղավարութիւնը և ուղղամտութիւնը մարդկային մտածումի
մարտկոցն է, ու մատենադարանը՝ անոր զինարանը:

Հայ ծնողքի անձնանուիրումի օրինակ մը.-

Աշոտ Գ. Ողորմածի կողակիցը՝ Խոսրովանոյշ Թագուհին իր բոլոր
օժիտները **Ծախեց** Սանահինի Ս. Ամենափրկիչ և Հաղթատի Ս. Նշանը շինելու
համար: Դպրոցասէր տիկինը **չխնայեց որեւէ ծախք** կամ ջանք՝ այդ երկու
դպրեվանքերը տիպար ուսումնավայրեր ընելու համար:

Յիսուս Քրիստոս ըսաւ հարուստ իջիսանին.

«Գնա՛, դուն ալ նոյնը ըրէ»:

Ունի՞նք Բաջութիւնը նաեւ մենք, նոյն զոհողութիւնը ընելու մե՛ր
զաւակներուն՝ ապագայ Հայ Մերունդին:

Ծնողքներ՝ Նոր սերունդին հետ նոր լեզուով պէտք է խօսին՝
օրինակով, ապրումով և Քրիստոսի անձնազոհողութեամբ:

Նոյ. 20, 1995

Քորոնթօ

ԱՍՈՒՍՆԱԼՈՒԾՈՒԹԻՒՆ

Քսաներորդ Դարու ընդհանրացած և օրինականացած ամուսնալուծումի կիրարկումները կ'առաջնորդեն անհատը, ընտանիքը և ազգը դեպի ընկերային Բայբայում և անձնասպանութիւն: Պատճա՞ռը:

Որովհետեւ մարդ արարած, իր մարմնական կազմութեամբ թէեւ նման է անասնակա՛ն աջխարհին, սակայն իր հոգեկան ու իմացական՝ գերբնակա՛ն զգայնութեամբ ջերմ աղերս ունի հանդէպ խորհրդաւորութեան և հաճելի կամ տխուր անմոռանալի տպաւորութիւններու, որոնք կը դրոշմուին իր մտքին, իր զգայնութեան և երեւակայութեան վրայ: Գիտական՝ ջօջափելի ճշմարտութիւնը կ'ուղղուի միայն մտքին: Հոգեկա՛ն՝ աննիւթական, ներանձնական ապրումներով ու կարօտաբաղձ զգայնութիւններով կը կերտուի ու կը կառուցուի ամուսնութեան խորհուրդը, ուր այր և կին կը հոգեխառնուին ոչ միայն մարմնակա՛ն սերնդագործութեամբ, այլ նաեւ աստուածադիր հոգեկա՛ն, բարոյակա՛ն և բարենորոգման բխումներու ճամբով:

Ամուսնութիւնը նման է մետաղաձուլումի և կառուցումի ընթացքին գործածուած խառնուրդին, որոնք կը բաղկանան զանազան տարրերէ կամ մասնիկներէ:

Հնչուն զանգակ մը իր մելանուջ դօղանչով կը հրաւիրէ հաւատացեալները աղօթատուն: Այդ զանգակին գլխաւոր խառնուրդը կը բաղկանայ պղինձէ ու անագէ: Տաճարի մը կառուցման համար գործածուած շաղախը կը բաղկանայ կրափոշիէ (cement), խճաքարէ և աւազէ:

Միթէ չ'արժեր մտածել, թէ ի՞նչ կրնայ պատահիլ եթէ հոգետրոփ զանգակին պղինձը բաժնել ջանանք անագէն, կամ կառոյցի մը շաղախը անջատենք իր բաղկացուցիչ տարրերէն... :

Եթէ յիմարաբար, տիմարօրէն կամ անմտօրէն փորձենք կառուցուածքի մը նիւթական բաղադրութիւնը, անոր բաղկացուցիչ տարրերը, բաժնե՛լ իրարմէ, կունենանք մի միայն Բայբայում, կոտորած և ոչնչութիւն: Ո՛չ զանգակը երկուքի կը կիսուի ու ո՛չ ալ տաճարը երկու փոքրիկ կառուցուածքներու կը վերածուի, այլ՝ **չգոյութեան**...: Այս պատճառով և իրատեսութեամբ, ամուսնական բաժանումը, համեստօրէն, պիտի կոչեմ անձնասպանութիւն, որովհետեւ հետեւանք վճռականօրէն Բայբայում է:

Ջախորդ ամուսնութեան մը ճարն ու դարմանը ամուսնալուծում չէ ու ոչ ալ մեկուսանալ: Դիմացինը Բննադատելն ու յանդիմանելը դժգոհի՛ արտայայտութիւն է միայն, որ դրական ոչինչ կը մատուցանէ: Ջախողանքը *պարտութիւն* է մը չէ՛, այլ ապացոյցն է սիրոյ գործադրումի և կատարումի: Դժբախտաբար, բնութեան մէջ ուժեր կան, որոնց վրայ իջիսելու կարողութիւնը չունի մարդ արարած: Սակայն ամէն դժբախտութիւն բնութեան ուժերու

հետեւանքը չէ՛, այլ մարդկային ազահութեան, անձնասիրութեան և *հպարտութեա՛ն* արդիւնք է: Օրինակ, դժբախտ են ֆիզիքական աչքերով կոյր եղողները--աւելի դժբախտ են մտքով կոյրերը, որոնք անփոյթ կերպով կը դանդաղին մտաւոր կուրութեան լաբիւրինթոսներուն մէջ:

Դժբախտութեան և ձախողութեան պատասխանատուն ընդհանրապէս, մարդը ի՛նքն է: Ինչպէս մարդ՝ իր ըսած խօսքը կամ արտայայտած մէկ գաղափարը յամաւորէն կը պաշտպանէ ու կը հետապնդէ մինչեւ որ յաջողցնէ զայն, նոյնպէս ալ ձախող ամուսնութիւն մը և դժբախտ կենսակցութիւն մը կրնայ դարմանուիլ ու դառնալ *դրաճան*, եթէ ենթական պատրաստ է ընելու պահանջեալ գիջումներն ու զոհողութիւնները: Եթէ կողմերէն մին իր սրտին մէջ ունի սիրոյ կայծը, հոգ չէ որ անթեղուած ըլլայ ան: Ինչպէս որ տահութիւնը չես կրնար անջատել կրակէն, նոյնպէս ալ սէրը չես կրնար դագաղի մէջ պահել, Սէրը անպատճառ յարութիւն կ'առնէ: Ամէն անգամ երբ փչէ սիրոյ հովը, ամէն անգամ որ կողմերէն մին յիջէ իր անցեալի սիրոյ պահերը, անթեղուած կրակը կրկին կը բոցավառի:

Այնպէս ինչպէս իմաստուն առեւտրական մը, որ կրկին ու կրկին անգամներ փորձած ու ձախողած է բայց չի դադրիր *կրկն՛ն* փորձելէ: Նիւթականի համար երբ մարդ ա՛յս աստիճան յամաւորէն կը փորձէ, ինչո՞ւ ամուսնութեան մէջ ձախողածներ չեն ուզեր **կրկն՛ն** փորձել... :

Կան պարագաներ ուր ամուսնութիւնը իր սաղմնային վիճակին մէջ հիմնուած է արդէն ջահու կամ անձնասիրութեան վրայ ու ո՛չ *փոխադարձ* սիրոյ:

Կան անողոք պարագաներ եւս, ուր կենսակիցներէն մին կը հրապուր- ուի իր ամուսինէն (այր կամ կին) տարբեր անձ է մը:

Թէեւ պարագաներու անակնկալ պայմաններովը կը բնորոշուի անձի մը առնելիք ուղղութիւնը կամ ամուսնութեան մը ընթացքը, սակայն լաւ- տեսութեամբ ու անձնագոհութեամբ կարելի է ամենադժիտմ ամուսնութիւն մը փրկել ու զայն վերադարձնել երջանկութեան, եթէ կողմերը ունին հաւատք, նուիրում և անթեղուած կրակը բոցավառելու անձնագոհութիւնը և պատ- րաստակամութիւնը:

Ինչո՞ւ ամուսնութիւն մը պարտի վերականգնիլ ու ո՛չ վերամուսնութիւն կնքել:

Ամուսնալուծումը, երջանկութեան *կայրճ* և կտրուկ ճամբան չէ՛: Ամուսնալուծումը անել կացութիւն մը չի՛ փրկեր այլ զայն կը բարդացնէ ու կը վերածէ ա՛լ աւելի խառնակ հանգոյցի մը:

Ամուսնալուծումը, անխառն ուրախութեան և բարօրութեան բանալի մը չէ՛: Որովհետեւ մարդ արարած անբան և անանձնական կենդանի մը չէ: Ան աշխարհ մըն է և ինքնատիպ պատմութիւն մը և անոր հոգին՝ տիեզերքի աննիւթական ենթանիւթն է: Մարդ իր անձին մէջ կը կրէ իր նախնիներու

աներեւոյթ հոգիները ու նաեւ իր սիրած կամ չսիրած կենակիցին հոգին: Ան կրնայ բաժնուիլ իր կենակիցին *մայրինէն* ամուսնալուծութեամբ, բայց ո՛չ անոր հոգիէն, գիտակցութենէն և ոգեկոչումէն:

Դժբախտ ամուսնութիւն մը կը նմանի ծովամոյն ըլլալի՜ք նաևու մը, որմէ խոյս տալը լաւագոյն և կարճ ճամբան կը կարծուի ըլլալ: Մակայն ոչ: Նաևէն հեռանալով դասալի՜ք ըլլալը, ենթական չապահովագրեր որ ան անպատճառ ցամաք կրնայ հասնիլ: Լաւագոյն, սակայն *դժուարի՛ն* ճամբան, նա՛ւր բարւո՜քել է, նորոգել կամ դարմանել է, *երկբա՛րի՛ն* փրկութեան համար: *Իսկ ի՛ր անձին* փրկութիւնը մտածել, *անձ նասիրութիւն* է, «ես»ին խորանին պաշտամունքը: Միաբանութիւնը՝ սիրոյ ստեղծագործութիւնն է, իսկ պառակտումը անձնասիրութեան և փառասիրութեան արդիւնքն է: Ներկայ Ձերդ Դարու հոգեբանութեան մէջ սիրապետող հոգին ***անձ նասիրութիւնն*** է, որ աւելի վտանգաւոր է քան հիւլէական ուումը: Կեանքէն փախուստ տալը անձնասպանութիւն է, իսկ զայն *բայւո՜քելը՝* հերոսութիւն: Անձնասերներ, դիւրակեցութիւնը նախընտրողներ և փառամուլներ *չուկին* անձնագոհութեան հոգին, այլ անոր փոխարէն ունին հաշիւ: Իսկ Զրիստոս ունի բարոյական անձնատուութիւն առանց հաշիւի: Յիսուս Զրիստոսո՛վ մարդ կը գիտակցի թէ ինք կոյր պատահականութեան կամ դիպուածի մը արդիւնքն է, այլ՝ անհուն սիրոյ ու Գերբնական ծրագրի մը իմաստալից արարչագործութիւնն է:

Ո՞ր ծնողքը իր հաջմանդամ կամ արկածեալ զաւակը կը սպաննէ, որովհետեւ աւելի *դիւրին* է ուրիշ առողջ և առոյգ զաւակ մը ունենալը քան թէ դարմանել արկածեալը և պակասաւորը: Գտնուած են ծնողքներ, որոնք իրենց բոլոր ունեցածը ծախսած են բժշկելու իրենց արկածեալ զաւակը: Ինչո՞ւ, որովհետեւ մարդ գոյացութիւնն է և թանձրացեալ շօշափելի էակը Աստուծոյ հանճարեղ խորհրդածութեան և սիրո՛յ արդիւնաբերութեան: Արարիչ Աստուած կրնար կորսնցնել Ադամն ու Եւան ու նոր մարդ մը ստեղծել: Մակայն, Ան սիրա՛ծ էր Իր *անոչբանիկ* արարչագործութիւնը, ուստի ջանաց և կը ջանայ ցարդ, փրկել ու յաւերժացնել զայն: Աստուած այնքան սիրեց աշխարհը, որ Իր Միածին Որդին դրկեց որ փրկէ մարդ էակը, վերադարձնէ զայն դէպի տուն, սրբութիւն, կեանք և դէպի ժառանգութիւն:

Ամուսնալուծման գլխաւոր պատճառը, չեմ համարձակիր ըսել միակ պատրուակը, *չսիրե՛լն* է կամ սիրելէ դադարիլն է: Ուստի ո՞վ կ'ապահովէ, որ *երկրորդ ամուսնութեամբ* ենթական կրկին պիտի չդարդի իր սիրած կենակիցը սիրելէ: Երբ անձ մը դադրի իր կենակիցը սիրելէ, յաճախ սիրոյ երաջտութիւնը ի՛ր թերութիւնն է ու ո՛չ դիմացինինը: Ճշմարիտ ու անձնագոհ սէր մը չի՛ մարիր, որովհետեւ սէրը սպառելո՛վ կը դառնայ անսպառ ու չգործածուելով ալ կը չորնայ: Զօրաւորագոյն սէրը անձնուիրութիւնն է, ո՛չ խոժոռադէմ, այլ բարեհամբոյր սէրը:

Ինչպէ՞ս բարելաւել ընկղմելու

մօտ եղող կենակցութիւն մը:

Քրիստոնեայի մը համար ամուսնութիւնը *խորհուրդ* է, ըլլալով հանդերձ սեռային ու ֆիզիքական զանազան հանգամանքներ: Ան արտաքին՝ շօշափելի և զգալի նշանն է, որուն միջոցաւ տեսանելի ձեւերու տակ անտեսանելի շնորհները կը ստացուին: Մեծ սրբապղծութիւն է խորհուրդի մը խորհրդագեղծումը: Ամուսնութեան սէրն ու անբակտելի կապը իր զօրութիւններով ու հոգեկան ներգործութիւններով հանդերձ, դիւրաբեկ ապակիի նման տկար է, անզգոյշ խօսքով կամ արտայայտութեամբ մը կը փշրուի: Պէտք է այդպէս ըլլայ, սակայն է: Ինչպէս Յարութեան խորհուրդէն կը ծնի տեսիլքը յաւիտենական կեանքին, նոյնպէս ալ ամուսնութենէն կը ծագի միասնական ստեղծագործութիւնն ու համակենսակցութեան սրբազան երաժշտութիւնը:

Կործանած հրաշակերտ տաճար մը կարելի է վերակառուցանել: Երկրաշարժէ քանդուած պալատ մը կարելի է աւելի գեղեցկօրէն վերականգնել, սակայն ի՞նչպէս վերարծարծել ջախջախուած սէր մը: Քրիստոս խոստացաւ ու վստահեցուց Իր հետեւորդները, թէ Ինք ջախջախուած եղէգը (մարդ արարածը) պիտի չփշրէ և առկայծ պատրոյգը պիտի չմարէ: Մակերեսային զգացումները և տպաւորութիւնները չեն որ կը լուսաւորեն իրերու և երեւոյթներու հասկացողութեան խորքը, այլ հաւատքի ջահն ու Հոգիի՝ լուսաւորումը:

Դիմացինը ամբողջական ջախջախումի ենթարկելէն առաջ, իրաւունք ունենալ կարծող կողմը, պարտ է որ ջանայ բարելաւել ու փրկել ամուսնութեան մակոյկը: Ինչպէս հիւանդանոցի մը մէջ բժիշկները կը ջանան բուժել հիւանդը որքան ժամանակ, որ ան ողջ է, սակայն երբ մեռնի, զայն կը փոխադրեն դիագնոստիկ: Նոյնպէս ալ հաւատացեալ զոյգեր որքան ալ թերի ըլլան իրենց կենցաղավարութեան մէջ, որովհետեւ ամուսնացած են եկեղեցւոյ մէջ և ուխտած ցմահ հաւատարիմ մնալ և զիրար սիրել, պարտ են փորձել իրենց միասնականութիւնը ու ոչ թէ հիւանդ վիճակով դիագնոստիկ տարուի...:

Ինչպէս կաթուածէ և սրտի տագնապէ վերջ, հիւանդը եթէ ուզէ ապրիլ, կրնա՛յ կազդուրուիլ, նոյնպէս ալ ամուսնութեան և սիրոյ տագնապէ մը յետոյ, կենսակիցներ եթէ ուզեն, ճաշակել երջանկութեան *փոխադարձ* ուրախութիւնը, կրնան իրենց անխառն երանութիւնը վերագտնել և իրականացնել: Ֆիզիքական տագնապէ մը վերջ, ենթական կակազելով կամ մեծ դժուարութեամբ կը խօսի, կը բալէ ու շարժուձեւեր կ'ընէ: Կան հիւանդներ, որոնք ֆիզիքական կամ հոգեկան տագնապէ մը յետոյ կը նախընտրեն մեռնիլ քան թէ ապրիլ: Այսպիսիներն են անոնք, որոնք անձնասպան կ'ըլլան:

Ամուսնութեան տագնապէ անցնող կարգ մը անձեր, դժբախտաբար, Յիսուսի գերեզմանին մէջ կը թաղեն իրենց հաւատքը և յոյսը: Տանդէի բերթուածին մէջ, Դժոխքի դրան ճակատին գրուած է. *«Թողէ՛ք որեւէ յոյս»*:

որով որ մտնում է՛ն: Յոուստոնութիւնը մելամաղձութեան բոյրն է: Մինչդեռ հաւատք՝, յոյս և սէր իրենց մէջ կը կրեն վերընձիւղելու ու վերակենդանալու գօրոյթն ու կամքը: Հաւատացեալ մը որքան ալ անցնի տագնապներէ և սայթափումներէ, անոր համար «յոյս»ը՝ կենդանի Անձնաւորութիւն մըն է՝ Լուսաւոր Յիսուս Քրիստոս մեր Լոյսը ու մեր Կեանքը: Ուստի դիմենք դէպի կեանք, դէպի լոյս առաւօտ՝ հաւատքով և լաւատեսութեամբ:

Ամուսնութեան տագնապը յարթափարելու առաջին քայլը, ձեռներու հպումով սկսիլն է: Յիսուս Քրիստոսի գորովագին ու փափկասիրտ Ձեռները դեղ ու դարման եղան մեղաւորներու ու հիւանդներու: Նոյնպէս տաճակ և *հաղորդիչ* ձեռներու ջոյանքը, փայփայանքն ու գգուանքը յարութիւն կու տայ անջարժութեան մասնուած սիրոյ և յուսահատ հոգիներու:

Երկրորդ քայլը, խօսակցութեան ընթացքին դնել է մեր ձեռները մեր կենակիցին ուսերուն, ջոյել անոր մտաբանափայլ մագերը և ժպտադէմ ու երագուն աչքերով նայիլ իր ծով աչքերուն մինչեւ որ հասնինք սրտի աչքին, որովհետեւ կնոջ մը հզօրագոյն կախարդանքը անոր աչքերուն մէջն է: Երբ երկու հայեացքները աչքերու ընդմեջէն հասնին սրտի և հոգիի աչքերուն, կուտակուած գգացումները, սխալ կամ ճիշտ, դուրս կը թափին ջրթներէ և աչքերէ ու վրիժավառ աչքերը կը վերածուին սիրավառ ու յուզումնավառ աչքերու:

Տեսնե՛լ միայն, արտաքին կերպարանքին նայիլ չէ՛: Տեսնե՛լ մարմնական աչքով ակնարկ մը նետել չէ՛, այլ աննախապաշար մտքով ու անկեղծ հոգիով ներթափանցել, ըմբռնել և ճանչնա՛լ է առարկան կամ *անձնաւորութիւնը*: Տեսողութիւնը միայն մարմնական աչքով չէ, այլ *հոգիին* և *սրտին* տեսանելիութեամբ: Աչքով տեսանելիութիւնը իր սահմանաւոր ջրջանակը ունի: Դիմացիներ երբ մտքով տեսնուի՝ ենթակային հորիզոնը ջատ աւելի կ'ընթարցակուի: Իսկ *հոգիով* երբ տեսնենք մեր կենակիցը՝ ոչ հորիզոն կ'ունենայ ան և ո՛չ սահմանում, այլ տեսողութեան թռիչքը կը տեսնէ թէ՛ ժամանակի և թէ՛ միջոցի անհունութիւնը ու միասնականութիւնը կը դառնայ յաւերժութեան երածջութիւնը:

Այն ատեն երկինքի աստղերը լուսածափտ պիտի ջողան վերականգնած ամուսնութեան վերեւ ու Յարուցեալ Փրկիչը լուսածնունդ ներգործութեամբ պիտի առաջնորդէ գիրենք նոր յարթութիւններու: Լոյսին դիմաց խաւարը խոյս կու տայ ու կը փախչի: Սիրոյ դիմաց անհասկացողութիւնը և դառնութիւնը կը ցնդին ու կ'անյայտանան: Սիրոյ Լուսաբացին երբ իրարու հանդիպին, նոյնիսկ երկու ներհակ հոգիներ, տխուր անցեալը կը մոռցուի Լուսահաղորդ Քրիստոսի կենսապարգեւ ներկայութեան:

Յունուար 30, 1995--Թորոնթօ

ՏՈՒՆ - - ԱՆԽԱՌՆ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ

Քանի մը կուտ և բոյն մը, երջանիկ կ'ընեն թոչուն մը: Իսկ մարդս ոչինչ կը գտնէ՝ որ կարենայ յագեցնել ինքզինք: Այսպէս, ամէնէն բարձր արարածը կը մնայ աւելի ապերջանիկ քան բոլոր միւս անասունները:

Կարելի՞ է դարձնել տուն մը սիրոյ օջախի: Այո՛ և ո՛չ: Ամէն ինչ փոխարժէք մը ունի, որ պէտք է հատուցուի: Ճշմարիտ գրաւականը մարդոց ու ազգութիւններու խաղաղ համակեցութեան, կը գտնուի **փոխադարձ** սիրոյ, յարգանքի, համբերութեան, զիջումներու, հանդուրժողութիւններու, որոնք կը ստեղծեն անդորր ու երջանիկ բոյն մը:

Ամուսնութիւնը խոստում մըն է ուրախութեան և երջանկութեան սակայն, ընդունելութիւն մը **ծառայասիրութեան** և անձնագորհ հասկացողութեան: Ան որ գիտէ ծառայել, գիտէ՝ երջանկանալ: Արուեստագետը միշտ կու տայ: Ան կու տայ երազները յոյզերը և ինչ որ գեղեցիկ է ու մարդկային: Արուեստագետը չի կրնար չտալ, որովհետեւ տալով ան կը դառնայ անսպառ:

Անգլերէն լեզուին մէջ կը գտնուի բառ մը որուն հայերէնը դժուար է գտնել: Անգլերէնի մէջ կ'ըսեն **maintenance**: Այս բառին հայերէնը հետեւեալն է՝ պահպանութիւն, թելթիկունք՝ ըլլալ և նեցուկ կանգնիլ: Գանատայի մէջ երբ յարկաբաժին մը գնես, կը հարցնես թէ այդ տան "մէյնթէնէնս"ը ի՞նչ կարծէ: Յարկաբաժին մը որքան փարթամ թաղի մէջ ըլլայ, որքան փառահեղ և պերճաշուք, անոր պահպանութիւնն ալ այդքան սուղ կ'արժէ:

Ուստի, կ'ուզե՞մք երջանիկ բոյն մը և անխառն ուրախութեամբ կենակցութիւն մը ունենալ: Պարտական ենք **նեցուկ կանգնիլ** ա՛յդ երջանկութեան: Խօսքով կամ մակերեսային օժանդակութեամբ չենք կրնար թելթիկունք ըլլալ ու պաշտպանել կեանքի երջանկութիւնը: Նիւթին տիրակալութիւնը (հարստութիւնը) չի կրնար հիմնաքարը հանդիսանալ երջանկութեան: Ինչո՞ւ, որովհետեւ կարելի է հարստութիւնը ձեռք ձգել խոտոր միջոցներով: Ծուռ հնարքներով չես կրնար երջանկանալ:

Հին կրօններուն մէջ, զոհը աստուածները պատուելու լաւագոյն ձեւ մըն էր: Հին Կտակարանին՝ Մովսէսի Օրէնքին մէջ զոհը Աստուծոյ սրուած նուէր մըն էր, յաճախ անասունի պատարագ կամ ընծայ կոչուած: Բրիստոնէութեան մէջ հաւատացեալին զոհը իր **ա՛նձը** ըլլալու է: Միալ ընթացքով շիտակ նպատակ հետապնդել անկարելի է:

Պօղոս առաքեալ պարզ և հասկնալի կերպով կը գրէ հաւատացեալ Բրիստոնէաներուն, թէ երջանկութեան ուղղին ուրկէ կը սկսի: Ան կ'ըսէ, «Կ'աղաչեմ որ դուք ձեզ Աստուծոյ ընծայէք որպէս կենդանի զոհ մը՝ իրեն վերապահուած, որովհետեւ ատիկա՛ է Աստուծոյ ուզած հոգեւոր պաշտօն-

մու նմշո--Հոռմ. ԺԲ.1: Դրամը կրնայ *սծանդակ* նկատուիլ, սակայն մարդկային յարաբերութեան արժեզինը՝ "մէյնթէնանս"ը, մե՛ր անձին *ընծայո՛ւմն* է ուրիշին, ո՛չ թէ ակամայ, այլ որպէս սիրոյ արտայայտութիւն:

Կեանքի ակնադիւրը Աստուած է, ու ո՛չ դիպուած կամ պատահականութիւն ինչպէս կարգ մը "գիտնականներ" կը փորձեն ճառել: Նոյնպէս ալ մարդու դաստիարակութիւնն ու վարժութիւնը կու գայ Աստուծմէ: Եկեղեցին ծաւալեցաւ առաւելաբար *կամառո՛ր* աշխատանքի, զոհաբերութեան և ինքնանուիրումի շնորհիւ: Հայ գրականութիւնը իրագործուեցաւ անձնակա՛ն զոհաբերութեամբ ու զրկանքով, էջ առ էջ, հայ հաւատացեալներ դրոշմեցին մեսրոպատառ լեզուն ու հիմնեցին Հայ Ոսկեդարը:

"Անառակ"ին առակը առակներու պսակին թագն է, անզուգականը, որ ինքնին բաւական է ճշգրտօրէն ցուցնել Աստուծոյ և մարդուն յարաբերութիւնը: Ոչ մէկ առակախօս թողած է այսպիսի հրաշալի առակ մը, այսֆան խորապէս գրաւիչ մարդոց սրտերուն: Անառակ Որդւոյն մեծ եղբայրը բոլոր օրէնքը պահեց, բայց սէր չուներ: Հասուն հաւատացեալին աղօթքն ալ՝ *«Տո՛ւր, տուր ինձի՞սէն* կը վերածուի *«Ըրէ՛ գիտա՛յ*, նման "Անառակ Որդիի":

"Անառակ Որդին" սիրոյ պատմական յուշարձանն է:

Աստուած, Իր Միածնի՛ն Մարդեղութեամբ, ընդունեց մեզ ինչպէս որ էինք: Մեր Արարիչ Տէրը չ՛րսաւ մարդկութեան. «Փոխեցե՛ք ձեր ընթացքը ու ես ձեզի կը դրկեմ Իմ Միածին Որդին», այլ.

«Աստուած այնպէս սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ Իր Միածին Որդին տուաւ, որպէսզի ով որ հաւատայ Անոր՝ չկորսուի, այլ ընդունի յաւիտենական կեանքը»:

Աստուած Իր ստեղծագործութեան որպէս պաշտպանութիւն և հոգածութիւն չխնայեց նոյնիսկ Իր Միածին Որդին... : Մենք, մարդ արարածներս, ի՞նչ կը նուիրենք պաշտպան կանխելու մեր տան ուրախութեան ու երջանկութեան համար: Զրիստոս Իր ամենախոնարհ ծագումով, Իր օրինակելի բարութեամբ, Իր օրինակելի համեստութեամբ, Իր օրինակելի զոհաբերութեամբ, և մանաւանդ՝ Իր օրինակելի աղքատութեամբ ազատագրեց մեզ մեղքէ դէպի հոգեկան ու բարոյական սուրբ ապրումի:

Դարձնե՛նք մեր հայեացքը սեղմուած հորիզոնէ դէպի լա՛յն ու ընդարձակ հորիզոն, ուր պիտի տեսնենք այն բաջակորով ու վեհանձն անձերը, որոնք արժանացած են մարդկային յարաբերութեան ու երջանկութեան թափնեպսակին: Ո՛չ թէ դիտելով իրենց սրտին փուշը, այլ զոհաբերակա՛ն սիրով իրենց դիմացինը:

Մարդկային դիմադրողականությունը երբ տկարանայ ամեն տեսակ վնասակար մանրէներ կը ջանան տապալել զայն: Ոգեկան աջխարհին մէջ ալ նոյնն է կեանքի պատմութիւնը: Հոգեկան տոկունութեան ոգին կը կոչուի. «*Խանդակաթ*» ազդեցութիւն կամ *գորովալի* զգացում: Խանդակաթ ու գորով կը նջանակեն գուրգուրանք արտայայտող սէր, ու ո՛չ գերեզմանի մէջ թաղուած սէր: Մարդ արարած չի՛ կրնար կորսնցնել իր սէրը, բայց կրնայ թաղել զայն գերեզմանի մէջ... :

Ինչպէս Ղազարոսի գերեզմանին առջեւ Յիսուս լացաւ, նոյնպէս Ան արցունքահոս աչքերով կ'ըսէ մեզի.

«Այդ քարը մէկդի՛ ըրէ»:

Մէկդի՛ ըրէ գերեզմանին քարը որպէսզի յարութիւն առնէ քու խանդակաթ սէրդ: Թաղուած գուրգուրանքդ թող բողբոջի ու տարածէ՛ իր հրապուրիչ գեղեցկութիւնն ու բոյրը: Գերեզմանի այլաբանական քարը ինչպէ՞ս կարելի է առարկայակա՛նօրէն ցոյց տալ: Դպչիլ նիւթակա՛ն արարք է սակայն անոր արդիւնքը անպատճառ ոգեկան արդիւնք կ'ունենայ: Օրինակ, մինչեւ որ ելեկտրական թելերը զիրար չդպչին, լոյսը չգոյանար:

Նոյնն է նաեւ մարդկային յարաբերութեան մէջ ալ: Ի՞նչպէս կը մտերմանանք մեր սիրած անձին: Նախ մատներու հպումով ու յետոյ ողջագուրումով: Դպչիլ, ջնորհակալութիւն յայտնել է: Մարդկային մատները միայն ճարտարապետութեան և երաժշտութեան համար չեն ստեղծուած, անոնց հպումի գերբնական զօրութիւնը գերեզմանէն դուրս ելլելով՝ միայն կը յայտնագործուի: Մեր գերեզմաններէն դուրս հանելու ենք սէրը ու ջերմացնելու զայն Արեգակն Արդարի՛ն՝ Յիսուսի շողերով:

Մեզմէ ոմանք կը զգուշանան իրար դպչիլ, կարծես թէ դիմացինը բորոտ մը ըլլար... : Միրոյ հպումը մեզ ելեկտրահար չի կրնար ընել, այլ կը լուսա-ւորէ, դիմացինը թափանցիկ կ'ընէ, անոր դերութիւնները անտեսանելի կը դառնան, ու մենք կը հասնինք մեր կենակիցին ներհնագոյն անձնաւորութեան: Ընտանեկան սէրը երկնային երջանկութենէն **նմոյշ** մըն է, որ Աստուած կ'ընծայէ մեզմէ իւրաքանչիւրին: Ան կ'ուզէ գիտնալ թէ մենք կը փափաքի՞նք տեսականացնել այդ երկնաընտանեկան սէրը: Եթէ "այո" է մեր պատասխանը, Ան նաեւ գիտնալ կ'ուզէ թէ, որքա՛ն զոհողութիւն ընելու պատրաստ ենք:

Մե՛ր ձեռքն է յաւերժացնել ընտանեկան երջանկութիւնը, ու ո՛չ դիմացինին ձեռքը: Միջոցը փորձել է, վերստին փորձել, և անգամ մը ե՛ւս փորձել է... Աստուած դարերէ ի վեր կը փորձէ հրապուրելու մեր փոխադարձ սէրը: Ընտանեկան երջանկութիւնը նշոյլ մը, ճառագայթ մըն է երկնային ուրախութեան: Մի ըլլար անհոգ:

Մարտ 6, 1996

ԸՆՏԱՆԻՔ, ԻՆՉ ԿԸ ՆՇԱՆԱԿԷ

Անասունները, թռչունները ծովային կենդանիները կրնան սեռայնապես միանալ, բայց երբեք ընտանիք մը չեն կազմեր:

Ընտանիքի մը ֆիզիզական ու հոգեկան կազմութիւնը չես կրնար փորձի ենթարկել: Ընտանիքը *հոգեմտքով նախան* կառոյց մըն է:

Անցեալին, ընտանիքը մասնաշատուկ կերպով նկատի առնուած չէր, ո՛չ թէ աննկատ ցգուած էր, այլ ընտանիքը նահապետական ըլլալուն համար, ան պահպանուած էր Բայբայումէ: Մինչ այսօր ընտանիքը ոչ թէ նահապետական ըլլալէ դադրած է, այլ առաւել եւս փոխակերպուած: Կեանքի հեւքը ընտանիքի անդամները իրարմէ օտարացուցած է: Ծնողք մը որքա՞ն ժամանակ կը յատկացնէ ու կ'ըզբարդի զաւակներով:

Եկեղեցին որքա՞ն օգտակար եղած է զաւակներ ունեցող ընտանիքներուն: Ընտանիքը ջիոթելու չէ ընկերայնութեան հետ և ոչ ալ արտաքին բարեկամներու: Ընտանիքը առաջին եկեղեցին դառնալու է հաւատացեալներու աւանդութեան մէջ:

Յիսուս, ուշադրութեան և մեծ հոգածութեան առարկայ դարձուցած էր ընտանիքը Իր ուսուցման մէջ:

1. Ամուսնութիւնը պարտ էր ըլլալ մնայուն, տեւողական և միակնութիւն

--Մարկ. Ժ.2-12, Մատթ. Ե.31, ԺԹ.3-11, Դուկ. ԺԶ.16, Ա Կորնթ. Է.10:

2. Զրիստոս բուն կերպով հակառակ էր պոռնկութեան և տուփամոլ

հայեացքներու--Մատթ. Ե.27-32:

Ընտանիքի գաղափարը սկիզբէն ի վեր հիմնուած է բնախօսական, բարոյական և կրօնական հիմերու վրայ: Յիսուս կը յայտարարէ.

«Ընտանիքի մէջ այր և կին միացած են և զայն որ Աստուած միաւորեց, մարդ չքաժնէ»: Զրիստոնեայ ընտանիքին համար բարոյականութեան չափանիշը միշտ Զրիստոս ու Իր ուսուցումներն ու սիրոյ պատուէրներն են:

Ինչո՞ւ բոլոր անասուններն ու կենդանիները ազատ են և ընտանիք չունին, իսկ մարդ արարածը, սկզբնականօրէն կը կազմէ ընտանիք և ունի բարոյական և սրբութեան հասկացողութիւն: Ինչո՞ւ այսօր անդուծիւն, ձանձրոյթ և տագնապ:

Երբ մտախոհօրէն հետաքրքրուինք վերոյիշեալ դէպքերով ու խորհինք անոնց ինչուններովը, լաւագոյն է որ անգամը եւս կարդանք մարգարէական գիրքերը, թէ ի՞նչ գրած են այս մասին: Նախ անդրադառնալու ենք, որ Աստուած Ի՛նք չէ ստեղծած անասուններն ու կենդանիները: Մարգարէական գրութիւնները սապէս կ'իմացնեն մեզի, ըսելով. «Եւ ըսաւ Աստուած, *“Երկիր՝*

Թող հանէ ջնջաւոր կենդանի՝ իր տեսակին պէս, անասուններ, սողուններ ու երկրի գազաններ՝ իրենց տեսակին պէս” և այնպէս եղաւ.-- **ԾՆՆՈՒՅՑ Ա.24:** Բոլոր կենդանի անասունները Աստուած չի ստեղծեր, այլ կը հրամայէ որ երկիրը, ա՛ն հանէ վերոյիջեալ գազանները:

Իսկ երբ Արարիչ Աստուած փափաքեցաւ Իր կերպարին ու նմանութեան պէս մարդ արարածը ստեղծել, կատարելութեան հասցնող Արարիչ Էութիւնը, Ի՛նք անձա՛մբ *կերտեց* մարդ արարածը: Ան ըսաւ. **“Մեր պատկերին ու մեր նմանութեանը պէս մարդ ընենք,** և ծովու ձուկերուն ու երկինքի թռչուններուն և անասուններուն ու բոլոր երկրի ու երկրի վրայ սողացող բոլոր սողուններուն թող իջիւէ: Եւ Աստուած Իր պատկերով ստեղծեց մարդը: Աստուծոյ պատկերովը ստեղծեց զանիկա, արու և էգ ստեղծեց զանոնք”

--**ԾՆՆՈՒՅՑ Ա.26-27:** Աստուածային շինարար ձեռքին տակ գետնի հողն ու կանալ կը դառնան աստուածակերպար և աստուածանման: Արարիչ Աստուած, մարդու շինուածքը, յաւելեալ կերպով կը բացատրէ ըսելով.

«Եւ Տէր Աստուած գետնին հողէն ջինեց մարդը, և անոր ոնցու ն՛նէրու ն կենդանութեան ջունջ փչեց, ու մարդը կենդանի հոգի (անձնաւորութիւն) եղաւ»--ԾՆՆՈՒՅՑ Բ.7:

Մարդկութիւնը ունի իր հոգին **(անձնաւորութիւնը),** և այդ հոգին Աստուծոյ հետ իր ունեցած սուրբ հաղորդութիւնն ու աղօթքն է: Մարդը մարմինի և հոգիի միասնութիւնն է: Մարդու մարմնի ո՞ր անդամին մէջ է հոգին: Ամէն տեղ. կեդրոն ունենալով սիրտը: Ինչպէս որ ամբողջ երկիրը կը պատկանի Թագաւորին, բայց այնտեղ ունի իր պալատը, նոյնպէս է մարդու հոգին: Աստուածային բոլոր ստեղծագործութեան մէջ, միայն մարդն է որ Իր Պատկերին և նմանութեան համեմատ ստեղծած է: Ի՛նչ պատիւ և ի՛նչ մեծ արժեք է այս մարդկութեան համար: Եթէ իրապէս Քրիստոսի հետեւորդ ենք, պարտաւոր ենք խոնարհ ըլլալ, այլապէս խոնարհութեան տեղ անմիջապէս կու գայ լեցնելու գոռոզութիւնը, հպարտութիւնը և ամբարտաւանութիւնը:

Մարդ և Աստուած իրարու միացած, միակամ, միասիրտ և միաբան, ըլլալու համար ստեղծուած են: Մարդ արարած, թէեւ մարմին և հոգի, սակայն իրապէս մէ՛կ են: Մարդկային մարմինն ու հոգին Աստուծոյ կամփին արտայայտութիւնն է: "Հոգի" նաեւ կ'ակնարկէ մարդու ներքին սկզբունքը և համոզումը: Աստուած Իր հոգւոյն անհունութեամբ կը սիրէ մարդ արարածը: Մարդ առանց Գերբնականին կը պարպուի, կ'անջփանայ, կ'իմաստագրկուի ու կը դառնայ գազաններէ աւելի վայրագ: Աստուծոյ սիրոյն ծնունդ են աշխարհ և մարդ, ինչո՞ւ, որովհետեւ մի միայն մարդ արարածն է որ գիտէ աղօթել և ջնորհակալ ըլլալ իր Արարիչին: Նոյն իսկ կրապաշտ հեթանոսութեան շրջանին:

Մարդ արարածին առաջնահերթ պարտականութիւնը միանալ է իր բաժանեալ կէսին, ո՛չ միայն սեռային յարաբերութեան համար, այլ դառնալու ամբողջութի՛ւն մը և հիմնելու ընտանիքը: Ադամ երբ կը նշմարէ եւան, կ'աղաղակէ ուրախութենէն, ըսելով. *«Հիմա ասկեալ ունկորէս ունկոր ու մարմինէս մարմին է»*.--**Մինդոց Բ.23:** Ադամ, եւայի՛ն պատճառով կը գտնէ ինքզինքը՝ իր "ես"ը իր բաժնեկիցը: Աստուծոյ ծրագրին մէջ մարդը պիտի *տէջ*: ըլլայ երկրին ու ո՛չ թէ բուն*տէջը*: Մարդ, որպէս Աստուծոյ *գործակիցը*, պիտի գործէ՛ երկիրը:

Ապրող արարածներու դասակարգութեան մէջ՝ մարդը կը պատկանի առաջակարգերու տոհմին: Մարդ կենդանիներէն կը տարբերի իր գիտակցական վարքով, բնական հոգիով, բարոյական սկզբունքով և ինքնիշխանութեամբ: Մարդուն բնորոշ է իր ինքնագիտակցութիւնը, ազատ կամքը և ստեղծագործ աշխատանքը: *«Միայն բարի ու արդար գործի և ստեղծագործ, ջինարար աշխատանքի ճամբուն վրայ է, որ մարդ...կը զգայ արարչական ուժերու զարթնումը իր մէջ»*.--**Վազգէն Ա. Կաթողիկոս:**

Ընտանիք կազմող մա՛րդն է միայն որ կրնայ ճանչնալ աստուածային արարչագործ սերն ու անձնագոհութիւնը: Մարդ առաջին հերթին պարտական է իր ընտանիքին, բարեկամին, և այնուհետեւ իր անձին, և վերջապէս Աստուծոյ, որպէս Անոր գործակիցը: Մարդ պէտք է ապրի ո՛չ միայն ինքզինքին համար, այլ և ազգին և համայն մարդկութեան: Եսականութիւնը և ինքնաբաւականութիւնը չարիք են: Այսպիսի անմեղ կարծուած յաւակնու-տութենէ ազատուելու համար, Աստուած նախածրագրած է ընտանեկան, մտերմական և սիրոյ ինկարոյր միջնորդութիւնը:

Ընտանիքը և անոր տէր ըլլալը, պատնէջ մըն է ո՛չ միայն պաշտպանելու ընտանեկան պատիւը և Բրիստոնեական բարոյական սկզբունքները, այլ այն մարդկային հիմնական արժէքները-- ընտանեկան սրբութեան Բայբայման և ընկերային կեանքի խաթարման:

Ընտանեկան յարկը փոքրիկ եկեղեցի է:

Այդ փոքրիկ և համեստ, սակայն սէր բուրո՛ղ եկեղեցիին մէ՛ջն է, որ զաւակներ կը սորվին ու կը ճանչնան զԱստուած ու կը հետեւին Յիսուս Քրիստոսի Ոսոնահետքերուն: Հաւատացեա՛լ ու գործօն Քրիստոնէայ եկեղեցիի մը յարկէն շրջանաւարտ կ'ըլլան Յիսուսի աշակերտիլ փափաքողները: *«Հաւատացեալներ անձ նապէս և իրենց ընտանեկան յարկին տակ ընթերցումի, ներշնչումի և հոգեկան ինքնաստուգումի աղբիւր վերածելու են Աստուածաշունչը»*.--**Գորեգին Ա. Կաթողիկոս:**

20րդ Դարուն ընտանեկան թագաւորութիւնը վերածուեցաւ հանրապետութեան, ուր անիշխանութիւնը նկատուեցաւ «ազատութիւն», անկարգու-թիւնը *առա՛ջիտութիւն*, սերը՝ *սեռ*, տունը՝ *ճաշարան* կամ պանդոկ: Ընտանիքի

մը ամենակարեւոր կարասին ընտանեկան սեղանն է, տան պաշտամունքին համար: Միակնութիւնը՝ որ կ'ապահովէ ամուսնական ամուլին հաստատութիւնը՝ մեծապէս կը նպաստէ ընտանիքին միութեանը, անձնուիրութեանը և բոլոր առաքինութիւններուն: Ընտանիքն է որ կը կազմէ ընկերային առաջին կապը, և անկէ կախում ունին Բաղաբի բարիքն ու ընկերային բոլոր զգացումները:

Քրիստոնեայ ընտանիքը ճկունութիւնը ունեցած է ոչ միայն կացութեան յարմարելու, այլեւ սերունդէ-սերունդ փոխանցելու իր լեզուն, կրօնը, աւանդութիւնները և բարոյական արժէքները: Ընտանիք և հայրենիք խորհրդանշող բառերը անեզր իմաստներ կը պարունակեն: Նահապետական ընտանիքը չէ՛, ազգային ընտանիքը չէ, ոչ ալ ցեղային ընտանիքն է ծայրագոյն ընտանիքը: Ծայրագոյն ընտանիքը՝ Աստուածածնանա՛ջ և Աստուածահաճո՛յ ընտանիքն է: *«Տուն և ընտանիք փոքր թագաւորութիւն մըն է ու եթէ ժողովուրդ մը կը յառաջդիմէ, իր առաջին Բայլը ընտանիքէն կ'առնէ: Ընտանիքը ժողովուրդի մը փառքի տաճարն է, ոյժն ու բազուկը, կամ ալ ժողովուրդի մը զեղծման սկզբնաւորութեան և կորուստի ճամբայ բացողը»--Խրիմեան Հայրիկ:* *«Ժողովուրդը և ազգերը միայն հացով չեն ապրում, թագաւորութեամբ և ազատութեամբ չեն բարձրանում, այլ առաել բարոյական ջնորհալի կեանքով, և այդ կենսական կեանք տուողը ընտանեկան տարբ օճախն է»--Խրիմեան Հայրիկ:*

Ընտանիքի մը ֆիզիզական ու հոգեկան կազմութիւնը չես կրնար փորձի ենթարկել, ընտանիք մը *հոգեմարմնակա՛ն* կարոյց մըն է: Ընտանիքի անդամները իրարու հետ կապուած են կենցաղի ընդհանրութեամբ, փոխադարձ օգնութեամբ և բարոյական պատասխանատուութեամբ: Ընտանիքի գաղափարը սկիզբէն ի վեր հիմնուած է բնախօսական, բարոյական և կրօնական հիմքերու վրայ: Այսօր Աստուած կը կանչէ մեզ մաս կազմելու Իր համաշխարհայի՛ն ընտանիքին մէջ՝ ճանչնալ մարդը որպէս մեր *ընկեր* արարածը:

Վերոյիշեալ բոլոր տեսութիւնները և իրողութիւնները, պատուէրներ և թելադրութիւններ են, որոնց ինչո՞ւնները մեզմէ շատերուն անյայտ կը մնան: Ինչո՞ւ երկու սեռերը, *մանչ* և *աղջիկ* կ'ուզեն միանալ իրարու հետ: Անչափահաս արու և էֆ անձեր, ինչո՞ւ իրարմէ կ'ախորժին, նոյնիսկ, առանց գիտնալու թէ սեռային և մարմնական յարաբերական վիճակ մը կայ: Այդ ձգողական և առինքնող ուժը ուրկէ՞ կու գայ և ինչո՞ւ սէր ու մտերմութիւն կ'ստեղծէ երկու սեռերու միջեւ: Իսկութեան մէջ, գիտակից անձի մը համար կեանքը, խորհրդաւոր և անեզր գաղտնիք մըն է: Ո՛չ իմաստասիրութիւնը և ո՛չ հոգեբանութիւնը ունին բացարցակ պատասխան մը: Եթէ պարզ հաւատա՛լ մըն է տիտղոսակիր անձերու, ես կը նախընտրեմ հաւատալ Արարիչ Աստուծոյ և Անոր յայտնութեան, ո՛չ որովհետեւ ապացոյցներ և փաստեր ունիմ, այլ

որովհետեւ աստուածային յայտնութիւնը գերազանց է բնական բացատրութիւններէն:

Մտերմութիւն մը և անկեղծ սիրոյ բարեկամութիւն մը կը խորանայ յարաբերութեամբ ու սրտակցութեամբ, նոյնպէս ալ առնչութիւն մը և ձգողական աղէրս մը կայ ընտանիքի մը մէջ: Ոչ թէ երկու սեռեր իրե՛նք կ'ըստեղծեն այդ գօրութիւնը, այլ այդ ներգործական ազդեցութիւնը հոն է, մարդ էակներ պարզապէս փորձելու են վայելելու այդ ընտանիք կոչուած սերն ու ձգողական հոգեկան սնունդը: Մարդ էակ, օդ ըսուածին ինչ ըլլալը չգիտեր, որքան ան կը կարծէ գիտցած ըլլալ այդ գիտութիւնը բաւարար չէ օդ ստեղծելու համար: Սակայն օդին հոն ըլլալը եւս, մարդուն որեւէ օգտակարութիւն չունի եթէ չպիտի փորձէ ներշնչել զայն: Մարդ, ոչ թէ շնչարութեան համար օդ կ'ստեղծէ, այլ օդը իրմէ առաջ հո՛ն է: Նոյնպէս ալ ընտանիք կազմելու զգայականութիւնը հոն է՝ երկու սեռերուն մէջ: Ոչ թէ իրե՛նք պիտի ստեղծեն որպէսզի կարենան ընտանիք կազմել, այլ այդ զգայութիւնը պարտ են օրինաւոր և աստուածահաճոյ բանալիով բանալ: Ինչո՞ւ, որովհետեւ մարդուս այդ զգացողութիւնը աստուածաշնորհեալ նուէ՛ր մըն է, ուստի բոլոր շնորհները որ կան և մարդիկ կը գտնեն, սրբութիւններ են, որովհետեւ Աստուծմէ կը բխին անոնք:

Սիրոյ և հանդուրժողական ընտանիքներն են որ խաղաղութիւն և երջանկութիւն ունին, որովհետեւ խաղաղութիւնն ու երջանկութիւնը Աստուծմէ կը բխին, և ոչ ուրիշ կերպով գտանելի են: Արարիչ Աստուած, Ի՛նք ստեղծած է մարդկութիւնը, ու ո՛չ երբեք գազան մը բարեջրջուելով դարձած է մարդկային էակ: Այնպէս, ինչպէս որ Արարիչ Աստուած աշխարհն ու մթնոլորտը պատրաստած էր Իր կերպարին ու նմանութեան մարդ արարածին, նոյնպէս ալ անոր բնակութեան, խաղաղութեան ու երջանկութեան բանալին յանձնած է բարձրագոյն էակին՝ մարդուն: Մարդ իր ազատ կամբով, Աստուծոյ միասնականութեամբ միայն կրնայ կարուցանել ընտանեկան յարկը, որովհետեւ միասնականութիւն, հաղորդութիւն և յարաբերութիւն Ի՛նքն է Աստուած: Որպէս նմուշ, Յիսուս կ'աղերսէ Հա՛յր Աստուծոյ.

*«Յաիտենական կեանքը այս է՝ որ ճանչնանք
միակ ճշմարիտ Աստուած, և ճանչնան Յիսուս
Քրիստոսը, զոր դուն դրկեցիր: Սո՛ւրբ Հայր, պահէ՛
զանոնք՝ քո անունովդ, որով ինձի առիթ, որպէսզի
անոնք մէկ ըլլան, ինչպէս որ մէկ ենք մենք:
Սակայն միայն անոնց համար չէ որ կ'աղաչեմ, այլ եւ
անոնց խօսքով բոլոր ինձի հաւատացողներուն
համար, որպէսզի ամէնքը մէկ ըլլան, ինչպէս դու ն,
Հա՛յր, իմ մէջս, և ես՝ քո մէջդ, որպէսզի անոնք ալ
մեր մէջը ըլլան, և որպէսզի աշխարհն ալ հաւատայ*

Թէ դո՛ւն դրկեցիր զիս--Յով. ԺԷ.3, 20-21:

Երկրային և մարդկային ընտանիքը կը ներկայացնէ երկնային և հոգեկան ա՛յն միասնակա՛ն համագոյութիւնը որ գոյ է իրապէս և ստուգապէս երկնայիններու մէջ, որ Աստուած կը ջանայ շնորհել նաեւ իրեն կերպարանակից մարդկութեան: Ինչպէս կա՛յ միացեալ ձայնաւոր երաժշտական երգչախումբ ուր մարդկային շունչը փոխակերպուելով կը դառնայ մեղեդի ու կը կախարդէ զինք լսողները, նոյնպէս ալ Քրիստոնէական ընտանիքը կրնա՛յ փայլատակել անլսելի, սակայն տեսանելի միասնականութիւն և համախմբում ծնողներու և զաւակներու միջեւ, որ բարի նախանձը պիտի արթնցնէ անթեղուած միութիւնը բազմաթիւ ընտանիքներու սրտերէն ներս:

Միթէ աստուածակերպար և աստուածանման մարդ արարածին կենցաղավարութիւնը, տեսանելի, լսելի և իմանալի կենդանի երաժշտութիւն մը չէ՞: Երաժշտութեան ակունքները սկսուած ու եղած են՝ նախամարդու յուզական ոգեշունչ խօսքի ելեւէջները, աշխատանքային ուրիշները, ձայնական ազդանշանները, հմայանքի հնչիւնային տարրերը, թռչուններու երգը, կենդանիներու սիրային կանչերը և մարդու ընտանեկա՛ն միասնականութեան համախմբումը:

Ընտանեկան ճշմարիտ միութիւնը փոխ-հաղորդակա՛ն միութիւնն է: Այս տեսակ տարբերութիւնները միութիւնը աւելի տիեզերական կը դարձնեն: Աղիւսներու և բազմաթիւ քարերու միութիւնն է որ կը կազմէ հսկայ ջէնքերը: Միութիւն մը հետեւանք է անխառն ու անկաշառ սիրոյ: Եթէ բաւարար թիւով ճշմարիտ հաւատացեալներ հայ եկեղեցիներու ճիւղաւորումներէն որոջեն փաշալերել միութիւնը, զիրար սիրելով ու յարգելով, չհամակերպելով մշակութային, ֆաղափական և յարանուանական *զատո՛ղ* տարբերութիւններուն,

**Երկնային ընտանեկան միութիւնը
կրնայ իրապէս իրականանալ երկրի վրայ:**

Մայիս 22, 2005

Թորոնթօ

Ը Ն Տ Ա Ն Ի Ք Ը

Տիեզերական ընդհանուր յարափոփոխ շարժման մէջ, ուր լեռներ կը գահավիժին ու ցամաքամասեր ծովատյոգ կ'ըլլան, ուր հզօր ազգեր յաւէտ կը կորսուին ու հմայագեղ մատենագրութիւններ իսպառ կ'այրուին, միակ անփոփոխ ու յաւերժօրէն մնայուն ապաստանարանը՝ ընտանիքը կը կանգնի:

Ընտանիքն է, որ անայլայլ միացումով ներդաշնակուած, արժէք կու տայ տիեզերքի գոյութեան և կենսանորոգ յաւերժութեան: Ընտանիքի մագնիսական և առինքնող միութենական սերն ու հոգեբուժ ուժն է, որ հնարաւոր կը դարձնէ զինք, ճակատիլ աշխարհի համայնատարած խենթ արջաւին: Ընտանիքի միասնականութիւնն է, որ կը ներդաշնակէ կեանքի ալեկոծութիւնը և կու տայ անոր համաչափութիւն, կայունութիւն ու ներքին դատարկութիւնն ու անորոշութիւնը կը պայծառացնէ:

Ի՞նչու ընտանիքը և ոչ ուրիշ ազդակ:

Որովհետեւ ընտանիքին՝ իրար զօրող կապերը նիւթական չեն, այլ՝ փոխադարձ սիրոյ հոգեկան հասկացողութիւն: Ընտանիքը կրնայ շարժիլ, սակայն միացած կը շարժի որպէս միաւոր (ամբողջութիւն): Ընտանիքը սիրոյ միասնականութեան ենթահողին վրայ կը ցնծայ: Անոր զուարթ երածջութիւնը՝ իւրաքանչիւր անդամին կեանքի և ապրումի հրճուանքին ապացոյցն է: Այս հոգեկան ու միաւորումի լուսեղէն ու անխոցելի գիտակցութիւնը կու գայ մեր Արարիչէն, Որուն Պատգամաւորը Յիսուս՝ կ'ըսէ,

*«Ինչպէս Հայրը իմ մէջս է և
ես Հօրը մէջ՝ դուք ալ իմ մէջս»:*

Ահաւասիկ՝ տիեզերքի արհաւիրքը եղող այլասերումի և օտարանալու դէմ կանգնած անպարտելի վահանը՝ (Սիրոյ միասնականութիւն)ը: Սիրոյ միասնականութեան չգոյութիւնը, պատճառ դարձած է բազմապիսի երիտասարդ և ծաղիկ անձնասպանութիւններու: Ի՞նչու այսօր վայրագ սպաննութիւններ և կորուստ: Ինչո՞ւ հարստութեան և ճոխութեան մէջ, մարդիկ իրենք զիրենք թշուառ զգան, դժբախտ զգան և կորսուած:

Մարդկային ընկերութեան, պարին ու երգին մէջ, ի՞նչու կարգ մը ունեւորներ միայնակ գոյատեւեն: Պատճա՞ռը: Անձնասիրութիւնն ու ազահութիւնն է:

Սիրովառ անձեր որոնք կը կազմեն ընտանիք կոչուած միաւորումը կամ ամուսնութիւնը, եթէ մոռնան կամ ուրանան իրենց հեռանկարն ու տեսլականը, որ իրենք այլեւս ընտանիք մը և ամբողջականութիւն մըն են ու ո՛չ անհատ անձ մը կամ ինքնավարութիւն մը, կը կործանեն նախ իրենք

զիրենք և ապա այդ կազմածը՝ միաւորութիւնը որ ընտանիքն է՝ իրենք են, իրենք իրենց միասնականութեան մէջ:

Արեւմտեան ֆաղափակրթութեան ընկերաբանութեան ներկայացուցած և դրոյած *անհատապաշտութիւնը*, որ անձնասիրական ազահութիւն է, ստեղծած է անհատին ուրոյն խաբուսիկ երջանկութիւնը և ցնորական երանութիւնը:

Ամուսնացեալ անհատ մը, որքան ալ իրաւունքներ ունենայ իր *անձնակա՛ն* երջանկութիւնը խորհելու և այդ ուղղութեամբ աշխատանք տանելու, երբեք մոռնալու չէ, որ անձնական երջանկութենէ զատ բարձրագոյն նպատակ մը եւս ունեցած էր ան անցեալին մէջ: Անձնական երջանկութիւնը յաւերժօրէն կը կայանայ աւելի խոր և աւելի ֆաղցր *ընկերայի՛ն* երջանկութեան և երանութեան մէջ: Ընկերային այդ կազմածը կամ հիմնարկութիւնը՝ ընտանիքի արուեստագիտութիւնն է:

Զսաներորդ դարը իր արեւմտեան անհատապա՛շտ ֆաղափակրթական փիլիսոփայութիւնով անորոշ արջաւանքի հետքի մը մէջ է: Ան մոռցած է ընտանիքը՝ անոր սրբութիւնները և պատիւը որ կը միաւորէ տունը, որ տաճար մըն է, հոգ չէ որ ան ըլլայ նոյնիսկ խրճիթ մը:

Ներկայ ընկերային ապրելակերպ ցաւերուն մեծ մասը կը կասի եթէ զարգացած կարծուած ժողովուրդներ իրենց խօլ վագֆին մէջ, վերադարձնեն ընտանիքը իր նախկին թիւ մէկ կարեւոր դիրքին և իրենք (անհատները) ստանձնեն երկրորդական, սակայն աւելի պատասխանատու դերը, որ է՝ *անձնուրացում*: Անձնուրացումն ու անձնագոհութիւնը, անձը կորսնցնել չէ՛, պարտութիւն մը չէ, և ոչ ալ մահանալ է: Անձնուրացումը այն արարքն է, այն ճանապարհն է որով անհատ էակներ, աստուածային սիրով, իրենք զիրենք ուրիշներու մէջ, իրենց սիրելիներու հոգիին մէջ կը բազմացնեն, կաճեցնեն և կը յաւերժացնեն:

Անձնուրացութիւնը նման է սիրոյ: Սիրոյ օրէնքն ու կանոնը մաթեմատիկական ձեւով չ'ընթանար: Մերը՝ բազմացնելու և աճեցնելու կերպը, հաւաքելով, ամբարելով և պահելով չ'ըլլար, այլ՝ զայն *բաշխելով*, տարածելով, և ուրիշները սիրելով կ'ըլլայ: Մերը՝ իր կարգին, գոհելով և անձնուրացումով կ'արմատանայ և կ'աճի:

Հետեւաբար ներկայ մարդկային սերունդը որ հեռատեսիլի անձնասիրական և եսամոլական ախտէն վարակուած, միայն **ի՛ր** անձնական հաճոյամոլ երջանկութիւնը կը փնտռէ, իր վախճանն է զահավիժող մահուան անդունդը և ինքնակորոյս դժբախտութիւնը: Մինչեւ մարդկային «ես»ը և իր անհատական բնորոշումը չի գտնէ՝ իր լրացուցիչ պայմանը "ընտանիք" կազմածին մէջ, իր կարծեցեալ հասողութիւնը պիտի ըլլայ պատրանք մը և ցնորք:

Մարդաշխարհի փրկութիւնը կը կայանայ միայն "ընտանիքի" վերահաստատման մէջ, ուր իւրաքանչիւր անձ ինքզինք կը գտնէ իր բաժանորդ լծակիցին անհատականութեան մէջ:

ԸՆՏԱՆԻՔ ԲԱՌԸ Ի՞ՆՉ ԿՐ ՆՉԱՆԱԿԷ

1. Ծնողք և ընտանիք
2. Ամուսնալուծություն
3. Տուն--Անխառն ուրախություն
4. Ընտանիքը Ի՞նչ Կը Նշանակէ
5. Ընտանիք

WHAT DOES THE WORD "FAMILY" MEAN?

ԱԼՊԷՌ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ
ՀԱՅ-ՔՐԻՍՏՈՆԵԱՅ
ԹՈՒԱԿԱՆ